փումէր . . . ։ Ես նկատեցի, որ կապիկը չունէր մի թաթը և իմ բոլոր կասկածներս անցկացան, այն Տատան էր։ Խեղճ կենդանին ինձ ճանաչեց. նա քսեց իրան դէպի ինձ, ճնշում էր, թռչկոտում էր և ամեն կերպիւ աշխատում էր ցոյց տալ ինձ իւր ուրախութիւնը։ Ես պատասխանեցի նորա փաղաքշանքներին, և չկարողացայ պահել իմ արտասուքս՝ տեսնելով նորան միայնակ, և միտս բերելով՝ որ նորա սէրն է դէպի ինձ պատճառը նորա անբաղդութեան։

Ես խնդրում եմ, որ դուք չէք դատապարտել ինձ եթէ ես խոստովանեմ, որ այս տեսութիւնը ես համարեցի ինձ համար ամենամեծ երջանկութիւն։ Զրկված ծնողից, բաժանված ազգականներից, չունենալով ոչ բարեկամ, ոչ ծանօթ, կարո՞ղ էի արդեօք ես լինել հաւատար դէպի այդ բարի անասունը, որը ինձ համար այդպէս խիստ միայնակ էր, և չնայելով նորան, սիրում էր ինձ առաջվայ ջերմութեամբ։ Ամեն օր ես գնում էի տեսնել իմ խեղճ Տատանին։ Ես տեսնում էի նորա մէջ միայնակ կենդանի, որը ունէր ինձ հետ մասնակցութիւն, և իմ սէրը դէպի նա օր ըստ օրէ աւելանում էր։

Թարգմանեցին Ռուսերէնից
Ասատուր Թումանեան.
Վահան Յարութիւնեան.
Տիգրան Մկրտչեան։

## ՀԱՅԵՑՈՒԱԾՔ
## ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՑ ՎԵՐԱՅ
### ԲԺՇԿԱԿԱՆ ԿՈՂՄԱՆԷ

Պ. Վիրխովի "Ուսումնարանաց ազդեցութիւնը առողջութեան վերայ" խորագրով մի աշխատութիւնը տպուեցաւ ի Ս. Պ. բուրգ անցեալ 1870 թուին։ Այս առթիւ բժշկապետ Պ. Պրիխոդկով՝ Կովկաս Լրագրոյ 126 համարում տալիս "Հայեացուածք ուսումնարանաց վերայ բժշկական կողմանէ" վերնագրով ընտիր և օգտաւէտ մի յօդուած, որպէսզի մեր Ազգ. և Հոգև. ուսումնարանաց և դպրոցաց իսկ լաւ բաւականին կարևորութիւն ունենալոյն համար իղձ կալայ թարգմանել և ամսագրոյս միջոցաւ սիրելի Ազգայնոց հաղորդել՝ միանգամայն ուսումնարանաց և դպրոցաց Հոգաբարձուաց ևս ուշադրութիւնը յատկապէս հրաւիրելով։

Ահաւասիկ Պ. Պրիխոդկովի յօդուածը։

«Բժշկականութեան նպատակն ոչ այլ ինչ է, եթէ ոչ մարդոյս կեանքը առողջ և երկար պահել։ Այս պատճառաւ ևս այնպէս կերևի թէ՝ երկրիս վերայ բժշկականութիւնը որպէս բարօրութեան ամենաբարձր արհեստ՝ անպատճառ եթէ հնար լինի՝ պարտ է ուսուցանել գիմնազիոններում, գիշերօթիկ ուսումնարաններում և ճեմարաններում։ Ի վերայ այսր ամենայնի՝ այս բժշկականութեան կանոնները ի նկատի չունենալով՝ մէկ որ և իցէ ատարաւի հակադրութեամբ իւրեանց ցանկութեան և նպատակին հասնելու համար՝ ծնողք և մանկավարժից մեծ մասը ոչինչ չեն խնայում իւրեանց մանկանց մտաւոր զարգացման համար, և իւրեանց նպատակն առաջ տանելու համար ամենայն տեսակ առատաձեռնութիւնք կանեն, և վերջն էլ որպէս ծնողք՝ նոյնպէս և մանկավարժք իւրեանց մանկանց գեղեցիկ նշանաւորաց վերայ կհպարտանան։ Բայց նոքա չեն նկատում, որ աշակերտներից շատերը իւրեանց գեղեցիկ ուսման հետ այն տեսակ երկարատև ցաւեր են ստանում, որ նոցա համար դառնում է մշտական ուղեկից դէպ ի մահը (կենաց վախճանը)։ Եթէ մեր երեխանց հասակը համաձայնէր իրենց ստացած ուսմանը և մտաւոր զարգացմանը, այն ժամանակ մեր որդիները չէին վերջացնիր իւրեանց ուսման ընթացքը աղաւաղուած՝ գեղին և կանանչ գոյնի երեսներին փայլելով, և նոյնպէս մեր աղջկերք 18 տարեկան հասակին մէջ չէին գանգատիլ (իւրեանց) մէջքի (թիկան) ցաւոյն վերայ։ Այս տեսակ մտածմունքները կծնանին մարդոյս մտաց մէջ Պ. Ռ. Վիրխովի տետրակի ընթերցման ժամանակ։ Այս ծանուցումն գրել էր Պրուսացւոց ազգային լուսաւորութեան, հոգևոր և բժշկական գործոց նախարարի հրամանաւ. և արդարև այս աշխատութիւնը ուշադրութեան ար-

ժանի բան է. Ուրեմն անհնար թէ՛ այժմ մեր ուսումնարաններում՝ բժշկականութեան որպիսի՞ կանոնները կպահուին, և որպիսի՞ կանոններ հարկաւոր է մտցնել, որ մեր երեխայքը կարողանան իւրեանց գլխաւոր ուսումն վերջացնել առանց որ և իցէ անձնական ակարութիւն ստանալու.

Մեր ուսումնարանաց գլխաւոր պակասութիւնը այն է, որ դասատանց մէջ օդոյ մաքրութեան պակասութիւնը կայ. Մաքուր օդոյ նշանակութիւնը ամենուս յայտնի է. սորան հաստատ ապացոյց կարեն լինել գիւղական երեխանց կարմիր թշերը՝ որոնք ամբողջ օր դուրս մաքուր օդ կծծեն, և քաղաքաց մէջ եղած երեխանց երեսին դեղին գոյնը. Ցաւակցաբար կասեմ, որ շատ ուսումնարանաց մէջ երեխայքը չունին այնքան ժամանակ. որ կարողանան դուրս գալ և մաքուր օդ ծծել. Ոմանք կպատասխանեն թէ՛ սենեկի մէջ կարէ լինել մաքուր օդ. ես այդ բանի մէջ կասկածաւոր եմ, որ բաց օդը կարողանայ նմանիլ սենեկի օդոյն, մանաւանդ այնտեղ՝ ուր միևնոյն սենեկի մէջ կգտնուին քանի մի անձինք. Յայտնի բան է, որ մեզանից իւրաքանչիւրոյս պատահած կլինի կուրծքի սեղմումն և մէկ տեսակ ջղային թուլութիւն այնտեղ՝ ուր որ շատ մարդիկ ժողոված կլինեին, ինչպէս ուսումնարանաց մէջ, դասարաններում, թատրոններում, եկեղեցեաց մէջ, և մինչև անգամ զօրանոցների մէջ, կպատահի հեղձուցիչ զգորշի. որով շատ թուլակազմ մարդիկ կնուաղին. Այս թունաւոր օդոյ ծանրաշարժ (ծանրաքայլ) ներգործութիւնը կարող ենք նկատել արհեստաւորաց և գործարաններում աշխատողաց երեսի գունից.

Արդարև թէպէտ ուսումնարաններում կան օդանցքներ. սակայն ոչ թէ դրքա, այլ և մէկ պատուհան ևս որ բաց լինի օդոյ մաքրութեան համար՝ այն բաւական չէ. Այլ առաւել լաւ կլինի, որ մէկ օդանցք լինի առաստաղի մէջ, իսկ միւսը նորա հանդէպը յատակի մէջ, և երկուքն ևս այնպէս փակած լինին, որ օդոյ մաքրելու ժամանակ կարողանան բանալ. Ձմեռը վառարանը առաւել լաւ կմաքրէ օդը, նա մանաւանդ եթէ ունենայ լաւ քարշումն. վասն զի վառարանը քարշումէ սառն օդոյ նիւթին կարգերից ածխածինը, որն որ իւր թանձրութեան մէջ ցած կմնայ. Նա հասարակ վնասակար են երկաթեայ վառարանները այն պատճառաւ՝ որ նոքա ինչպէս շուտ կտաքանան, նոյնպէս և շուտով կսառչին, որով օդը իւր խոնաւութիւնը խոպառ կորուսնելով՝ աշակերտք և աշակերտուհիք միշտ կգանգատին գլխացաւից, սրտի տրոփելուց և կուրծքի սեղմումից. Մաքուր օդից միսկը այնքան վնասակար չէ. եթէ օդը 2 աստիճան էլ սառը լինի՝ այնքան չի վնասիլ մարդուս, որքան այն օդը՝ որը միայն բաղկանումէ գլխաւորապէս ածխածնից և զուրկ է թթուածնից. Սենեկի տաքութիւնը միշտ պէտք է բարեխառն լինի ո՛չ առաւել քան զ16 աստիճան Ռ. և այս պատճառաւ էլ իւրաքանչիւր դասատան մէջ հարկաւոր է ջերմաչափ ունենալ.

Դասատանց մէջ եղած օդոյ անմաքրութեան վրայ խօսելու՝ հարկաւոր է նոյնպէս ծանօթացնել շնչառութեան և տեսողութեան փոշիից և աղբիւրոյնից կրած վնասուց վերայ. Նորանցից զարգանումն բիւրաւոր մանրադիտական կենդանիք, որոց սերմերը օդոյ մէջ լողալով՝ շնչառութեան ժամանակ կըկլանենք, և նոցա հետևանք է անզարը, արգանդի ախտը և այլն. Ճառագայթները երբ կշողշողան դասատանց մէջ, այն ժամանակ կնկատենք ճառագայթից մէջ սարսափելի փոշի. Այս անպարմաքրութիւնը կարելի է հեռացնել տախտակամած* յատակները մաքուր պահելով՝ պսպղուն գոյն տալով. բայց միևնոյն ժամանակ զգուշալ փոքր մէջից կրվնասեն վարժապետաց և աշակերտաց այն նիւթեղինաց հոտը և ցնդումը՝ որք գործ են ածուել սենեկի ներկելուն վերայ. Իւրաքանչիւր բժշկին յայտնի է շնչարգելութեան սաստիկ ուժգնութիւնը (արկած)՝ մինչև անգամ և կաթուածը՝ եթէ մարդ երկար ժամանակ մնացել է այն սենեկի մէջ, որը ներկուած է կանանչագոյն. իսկ անզարի ցաւը և գլխոյ պտոյտը կպատահի նոր գոյն տուած յատակի հոտից. և անկարծիք մեզանից շատերը այս վերյիշեալ հիւանդութիւնները կրած են. Շատ մոմերը և լամպերը նոյնպէս կապականեն օդը. և այս պատճառաւ էլ ուսումնարանաց մէջ գիշերային երկար պարապմունքը վնասակար է. Եթէ վառարանը շուտով փակեն, որ գնա փայտը օրինաւոր կերպիւ

պրված չլինի, նոյնպէս մեծ մասս կպատահի՝ այն է կզգանք ածխային գոլից (անկենդան գազ), մի տեսակ թոյն, որ մարդուս կարող է մեռցնել: Օդը այս տեսակ մասնիկը՝ որը ուսումնարանաց մէջ կպատահին, կարող են պակասել՝ եթէ սենեկաց մեծութիւնը համապատասխանէ աշակերտաց թը-ւոյն: Եթէ ուսումնարանումը կայ 50 աշակերտ, իւրաքանչիւր աշակերտին հարկաւոր է 6 քառա-կուսի ֆութ (սաժենի) տեղ, ապա ուրեմն 50 աշակերտաց համար հարկաւոր է այնպիսի դահլիճ որը մեծութիւնը լինի 300 քառակուսի ֆութ:

Ինչպէս որ վերը յիշեցինք, ուսումնարանաց մէջ եղած անմաքուր օդն է գլխաւոր պատճառ, որ արիւնը այնպէս չէ թթուած" ինչպէս հարկն է. վասն զի այն անմաքուր օդը մէջ թթուածնոյ պակասութիւնը կայ, և նրանից էլ առաջ կգան բարակցաւ և խոյլ: Գ. Էնգելի վիճակագրական տեղեկութիւնքը կհաստատեն թէ Ա. բարակցա-ւը մեծաւ մասամբ կզգանք ստորին հասակին մէջ (6—12 ամ). Բ. նա կզարգանայ 10 15 ամ. և Գ. վտանգաւոր է լինում 15—20 ամ, այնպէս որ 100 մեռելից նկատել է որ՝

5—10 ամաց = 4. 81
10—15 — = 12. 96
15—20 — = 31. 88

Այս տեսակ մահուան պատճառը բոլորը ու-սումնարանիցը չէ, այլ և կպատահի զանազան ժառանգական հիւանդութիւններից: Բայց կան և առանձին հետազօտութիւնք, որք կհաստատեն թէ այս մահը մեծաւ մասամբ կպատահի գիմնա-զիաններին և ճեմարաններին փակեալ օդից: Գ. Ֆարմիշէյը կպատմէ թէ՝ մէկ ուսումնարան չունէր որահ՝ ուր կարողանային աշակերտք խաղալ, և 24 աշակերտահիններից եօթը ստացան խոյլ և բարակցաւ:

Նորմանդի մէկ ուսումնարանում՝ ուր 600 աշա-կերտք կուսանէին, նոցա մէջ այնպէս բարակցաւը տարածուեցաւ, որ մինչև անգամ քաղաքական կառավարութիւնը առանձին ուշադրութիւն դար-ձրուց այն ուսումնարանի վերայ: Գ. Արնոտի քննութիւնից երևեցաւ, որ աշակերտաց կերակուրը թէպէտ շատ պատուական էր, սակայն օդը շատ անմաքուր, և արդարև այն ուսումնարանում մահը շուտով դադարեց, երբ որ զանազան օդանցքներ շինուեցան: Նոյնպէս կպատահին զանազան հի-ւանդութիւնք ինչպէս որկորի ցաւ, փողացաւ, թոքացաւ, և սոցա գլխաւոր պատճառն է փոշին, ուսումնարանաց մէջ մուխը և թափանցիկ հողմը: Ի հարկէ ամենայն մարդ կարող է ասել թէ՝ մեր ուսումնարանաց շինութիւնները մեծաւ մասամբ չեն համաձայնում բժշկական կանոնաց: Արդարև ուսումնարանի շինութիւնք և նոցա համար տեղ ընտրելը շատ դժուարին է: Այսու ամենայնիւ Գաղղիայում՝ եւ՝ ինչպէս կերևի առ Ներքին գոր-ծոց նախարարին Գ. Դիւրուայի գրած յայտարա-րութիւնից 1867 թուին կայսրութեան մէջ եղած առաջին կարգի ուսումնարանաց վերայ, թէ 76 ուսումնարաններից միայն մի քանիսը յարմարա-ւոր շինութիւնք ունին ուսումնարանական բժշ-կականութեան կանոնացը նայելով: Ահա նորա եզրակացութիւնը. ուսումնարանները պէտք է լի-նին քաղաքից դուրս՝ բարձրաւանդակ տեղ, հի-ւանդանոցից, զօրանոցից, սպանդարանից և վա-ճառականութեան հրապարակներից հեռի: Ու-սումնարանը լաւ լուսաւոր պէտք է լինի, և չոր կողմը բաց. մինոյն ժամանակ իւր առաջին պէտք է ունենայ պարտէզ և մարմնամարզու-թեան գործիքներ (ГИМНАСТИКА):

Այժմ շատ կգրեն և շատ կվիճեն ուսումնա-րանաց սեղանների և նստարանների մեծութեան մասին. թէպէտ այս բանիս վերայ եղած երկար քննութիւններն էլ ոչինչ մէկ օրինաւոր հետևանք չունեցան: Նոյնպէս կյայտնեմ իմ մխիթարու-թիւնս, որ այժմ այս տեսակ ուսումնարանական գործոց վերայ մեր հասարակութիւնք եւս կմտածեն: Ինձ կթուի, որ նստարանի և սեղանաց լայն կամ նեղ լինելը այնքան մեծ բան չէ, այլ գլխաւորն այս է, որ լուծեն այս երկու խնդիրը Ա. թէ սե-ղանը որչափ պէտք է բարձր լինի նստարանից, և Բ.. թէ որքան հեռաւորութիւն պէտք է լինի սե-ղանից և նստարանի մէջ: Կրատոսխանեն, թէ նստարանի բարձրութիւնը պէտք է համաձայնի սրունքի (голено) երկարութեանը, այնպէս որ նստելու ժամանակ ոտքերը ազդրի հետ ուղղան-կիւնի կազմեն, որով ոտքերը օդոյ մէջ անշարժ

կենան։ Իսկ ինչ որ կվերաբերի սեղանից և նստարանի մէջ եղած տեղւոյն, այնտեղ ևս միայն հարկաւոր է, որ աշակերտը կարողանայ անարգելք կանգնել։ Բայց աշակերտաց հասակը միմեանցից տարբեր լինելով, առաւել լաւ կլինի, որ մենք մեր տեսողութեան կանոնաւոր հեռաւորութիւնը ընդունենք (10—12") և այս կլինի չափ սեղանից և աչաց հեռաւորութեան.

Օրիորդաց և տղայոց մեծ մասը՝ որ կարճատես են, սոցա բոլոր պատճառն է ուսումնարանաց գիշերային վատ լուսաւորութիւնը՝ և պարապելու ժամանակ սեղանից աւելի ընկած անկանոն հեռաւորութիւնը։ Վերջին ժամանակներումս Դոկտոր Քոնը (Պրեսլաւ քաղաքում) ապացուցել է՝ երբ որ նրան գիտաց խորհուրդ հարցնելու կարճատես տղայոց և օրիորդաց աչացին քննութիւնը. և գննելով մօտ 10.000 աչաց կարճատեսութիւնը, հետևցուց թէ՝ 17% թոյլ տեսողութիւն ունին, և այսպէս դասաւորեց.

| | |
|---|---|
| Գիւղական ուսումնարանաց մէջ . . | 5. 20% |
| Քաղաքական սկզբնական ուսումն. մէջ | 14. 7% |
| Միջին կարգի ուսումնարանաց մէջ . | 19. 2% |
| Օրիորդաց բարձր ուսումնարանաց մէջ | 21. 9% |
| Ռէալական ուսումնարանաց մէջ . | 31. 7% |

Աշակերտաց զանազան տեսակ աչաց ցաւերից յետոյ, զանազան ուսումնարանաց մէջ կարճատես աշակերտք են 10%, իսկ համալսարանի աշակերտներից 60%, և այս էլ դասատանց վերայ բաժանեց.

| | Ա. | Բ. | Գ. | Դ. | Ե. | Զ. |
|---|---|---|---|---|---|---|
| Սկզբնական ուսումնարանաց մէջ | ,, — | ,, — | 2.9— | 4.1— | 9.8— | 9.8 |
| Գիմնազիոններու մէջ | 12.5— | 18.2— | 23.7— | 31.0— | 41.3— | 55.8 |

Յայտնի բան է, որ աշակերտը անցնելով դէպ ի բարձր դասատուն՝ նորա կարճատեսութիւնը առաւել կաւելանայ. Գիշերային վատ լուսաւորութեան ժամանակ՝ և մանաւանդ սեղանից և նստարանից անկարգ դրութիւնից աշակերտը գիշերով մեծա դժուարութեամբ՝ գլուխը խոնարհեցնելով՝ մանր տառը հազիւ հազ կընթեռնու, և աչաց ընթը ցած պահելով՝ աչաց արտաքին ծիւղերը սեղմելով՝ աչաց խնձորի վերայ՝ և բաց յայտնանէ արիւնը ժողովելով գլուխ խոնարհած գրողի կամ՝ նկարողի աչաց մէջ պատահում է այս ցաւը (կարճատեսութիւն). Ահա մեր անչափ սեղաններին հետևանքը. Գլուխ խոնարհած ժամանակ եթէ սեղանը ցած է, պարանոցի արիւնատար երակները կսեղմուին, փորոտիքը նոյնպէս կսեղմուին շնչառութիւնը կդառնայ անկանոն. մարդս կսկսի խոր շունչ առնել և յաճախ յորանջել, և այս տեսակ արեան հաւաքումը կթուլացնէ ուղեղի գործունէութիւնը՝ և աշակերտը կդառնի կծուլանայ և այլ ևս չի կարողանար պարապել. Այս պատճառաւ էլ քանի մի երեխայական հիւանդութիւնք կկոչուին ուսումնարանական հիւանդութիւնք. Պ. Գիլլոմը Նեօֆշատելեան Կոլլէգիայում (Շուիցերիայում) տեսաւ 22% երեխայք և 20% աղջկունք, որք քթից արիւն կհոսէին (մեծա մասամբ բարձր դասատանց մէջ). և դարձեալ տեսաւ 51% աղջկունք և 28% տղայք, որք գլխոյ ցաւից կգանգատէին. Առաւել հաւատի կերպիւ կարենք ասել, որ ողնաշար սեան (позвоночный столбъ) ծռումն ուսումնարանական հիւանդութիւն է. Եթէ նկատենք աշակերտի դրութիւնը պարապելու ժամանակ, դուք կտեսնէք՝ որ մէկ թիկունքը միւս թիկունքից վեր կպահէ՝ և ողնաշար սիւնն էլ բարձրացած թիկունքի կողմն է ձգւում. Այս ինչից կպատահի. ահա սորա պատճառները 1) բարձր սեղանից վերայ պարապելու ժամանակ ակամայ ստիպուած է լինում մարդս մէկ թիկունքը՝ որքան կարող է՝ բարձր պահելու, 2) գրելու ժամանակ էլ սովորաբար գլուխը ձախ կողմն թեքելով՝ աջ կողքը ստիպուած դէպ ի աջակողմն է թեքում. Այս հիման վերայ Պ. Գելեները կըմեղադրէ ուսումնարանաց այսպէս, թէ՝ "երբ համարեա 90% ծռումն պատահում է ուսումնարանական հասակին մէջ, և ծռումն պատճառն է գրելու ժամանակ ունեցած դիրքը, մենք այս պատճառաւ ունինք իրաւունք ուսումնարանը մեղադրելու. Յայտնի բան է բացառութիւն էլ կայ. շատ անգամ՝ այնպիսի երեխաներից մէջքն է ծռում, որ երբեք ուսումնարան տեսած չեն.

Այս տեսակ զանազան վնասները ուսումնարաններից հեռացնելու համար՝ հարկաւոր է ուսուցչաց և ուսանողաց հետագայ խորհուրդները տալ.

1) Պարապելու ժամանակ այնպէս նստել, որ ամբողջ իրանը (туловище) իւր լայնութեամբ ուղիղ դարձած լինի սեղանոյ առաջի ծայրին.

2) Ոտքերը պէտք է յատակին հասնին. իսկ եթէ չհասնին, հարկաւոր է ոտից տակ փոքրիկ աթոռներ ունենալ.

3) Նստարանները անպատճառ ունենալու են քամակ.

4) Սեղանոյ բարձրութիւնը պէտք է հաւասարի կրծոսկեր ծայրին (подложечко). իսկ եթէ սեղանը փոքր ինչ բարձր է, կարող ենք փոքրիկ բարձ նստարանի վրայ աւելացնել.

5) Գրելու ժամանակ երկու ձեռաց մեծ ոսկորները մինչև ծայրը սեղանոյ վրայ պէտք է լինին, և մէջքն էլ ուղիղ դիրք ունենալու է.

6) Տետրակները և գրքերը պէտք է ուղղահայեաց գծիւ միաւորուած լինին տեսողական (տեսութեան) առանցքների հետ.

7) Ոտի վրայ երկար գրելը վնասակար է այն պատճառաւ որ հոգնած ոտքերը միշտ կփոխեն մարմնոյ դրութիւնը, և կուրծքն էլ սեղմուելով սեղանոյ վրայ՝ բաւական վնաս կկրէ.

Սակայն կկրկնեմ, որ ուսումնարանաց նստարանների մեծութեան և սեղանների դէպ ի նստարանները ունեցած փոխադարձ յարաբերութեանց խնդիրը մնաց առանց լուծելու. Սորա համար հարկաւոր է մեծ աշխատութիւն և ամենանուրբ չափ մարմնոյ մեծութեան և նորա մասանց միմեանց հետ ունեցած յարաբերութեանց և կապակցութեանց վրայ. Ի վերջոյ այսքան միայն կասեմ, որ այս տեսակ գործոց մէջ մանկավարժները բժշկաց հետ միասին ձեռք ձեռքի տուած աշխատելու են,,,

Ես իմ կողմանէ պարծանք կհամարիմ ասելու որ մեր Մայր Աթոռոյ Նորակառոյց Ճեմարանը դեռ ևս միայն շինութեան կողմանէ ամենայն կերպիւ կհամապատասխանէ վերոյիշեալ Գադլիացի Պ. Վերնուայի պահանջմանցը.

Գէորգ Ա–ագ Սարգ–ագ Ս–րգէնէանց:

# ԹԱՐՈՑԱԿԱՆ

## ՆԿԱՐԱԳԻՐ ՄՏԱՒՈՐ ԿՈՒՐՈՒԹԵԱՆ.

Որչափ որ մտաց տեսութիւն բարձր է և գերազանց քան մարմնոյ տեսութիւն, այնչափ ևս մեծի թշուառութեան ենթարկուած և ամենուն ցաւակցութեան արժանի է մտաւոր կուրութիւն. վասն զի թէպէտ և արտաքին կոյրն զուրկ է տեսանելեաց աղնիւ և գերագոյն զգայարանքէն, որով և զուրկ է բնութեան հրաշագեղ տեսարանաց հպաւոր վայելքներէ, սակայն մտաւոր լուսաւորութեամբ, եթէ ունի, կարող է իւր ամեն շրջապատող առարկաները ըմբռնել, զննութեան տակ ձգել, զգալ նոցանից բերկրութիւն, զուարճանալ, սփոփել իւր վշտաց դառնութիւնը, և լցուցանել իւր արտաքին տեսութեան պակասութիւնը. որոց ապացոյց կտեսնենք մի կոյր Հոմերոս, որ իւր չքնաշխարհիկ հանճարով հին և նոր գրականական աշխարհ կզարմացնէ և պատմական էջերու մէջ իբրև պարագլուխ քերթողաց կփառաւորուի. Կոյր էր Անգլիացին Միլտոն, բայց իւր հրաշալի ''Դրախտ կորուսեալ,, դիւցազներգութեամբ անմահացաւ աշխարհիս վերայ. Կթողում յիշատակել ուրիշ բազմաթիւ օրինակներ, որոնցմէ պարզապէս կերևի թէ՝ ոչ այնչափ ցաւալի է մարմնոյ կուրութիւն, որքան մտաց. Մտաւոր կոյրըն թէև բաց անշամանդաղ աչօք, սակայն կը տեսնէ և չի տեսներ, կիմանայ և չիմանար, լոյսն խաւարէն և ոչ բարին չարէն կարող է անջատել. ամենայն առարկաներու միայն մակերևոյթ կզննէ, բայց խորը չի կարող թափանցել, որ է մտաց խակական պաշտօնն. Միևնոյն են նորա համար անշուք խրճիթներ և բարձրաբերձ պալատներ. միևնոյն են նորա համար ապականեալ և ցեխոտ ճանապարհներ և աքքունի կուռ լուսաճաճանչ մենաղարդ պողոտաներ. գրեթէ միևնոյն են նորա համար աղքատիկ գիւղօրայք և չքնաղատես մայրաքաղաքներ, արդարութիւն և անիրաւութիւն, ճշմարտութիւն և սուտութիւն, առաքինութիւն և մոլութիւն, թշնամութիւն և բարեկամութիւն, արժանաւորութիւն և անարժանութիւն, ուսում